

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԸ ԵՎ ԼԵՐՄՈՆՏՈՎԻ ՊՈԵԶԻԱՆ
(Մ. Յու. Լեւոնտովի ծննդյան 160-ամյակի առթիվ)

Ռաճասիր. գիտ. դոկտոր է. Մ. ԶՐԲԱՇՅԱՆ

1

Հետեւելով արեւելահայ պոեզիայի պատմությանը, դժվար չէ նկատել, որ սկսած անցյալ դարի 50—60-ական թվականներից, նրա գրեթե բոլոր ակա-նավոր ներկայացուցիչների ստեղծագործական դիմանկարի ձևավորման գոր-ծում, մեծ կամ փոքր չափով, մասնակցել է այն, ինչ Բելինսկին անվանում էր «լերմոնտովյան էլեմենտ»։ Որուս մեծ բանաստեղծի կերտած հզոր, գեղեցիկ կերպարները, նրա արտահայտած մարդկային խորագույն ապրումներն ու կրքերը շատ հալ ռանաստեղծների համար անշիջանելի հմայք են ունեցել և նոր թափ են հաղորդել նրանց ստեղծագործական որոնումներին։ Ավելորդ է ասել, որ մենք խոսում ենք ոչ թե Լերմոնտովի գեղարվեստական սկզբունքնե-րի մեխանիկական փոխառման, այլ նրանց ստեղծագործական ընկալման մա-սին։ Խոսքը վերաբերում է ազգային գրականությունների փոխներգործությա-նը, տվյալ դեպքում՝ ռուս գրականության առաջավոր փորձի յուրացմանը՝ լուծելու համար այն խնդիրները, որ առաջադրում էին հայ ազգային-սոցիա-լական կյանքն ու արվեստի զարգացումը։ Խոսքը վերաբերում է համաշխար-հային պոեզիայի հավերժորեն գեղեցիկ բարձունքներից մեկի առաջացրած ստեղծագործական ազդակներին՝ մի ուրիշ ազգային գրականության զար-գացման մեջ։ Այդ երևույթը, իր բազմազան դրսևորումներով, կարելի է նկա-տել արեւելահայ նոր բանաստեղծության ամբողջ պատմության ընթացքում՝ սկսած Մ. Նալբանդյանից և Ռ. Պատկանյանից մինչև Հ. Թումանյան և Ավ. Բսահակյան։

Նկատվում է, հատկապես, որ մեզ դարի սկզբին, հասարակական և գե-ղարվեստական կյանքի արտակարգ բարդ պայմաններում, հող ստեղծվեց նաև Լերմոնտովյան պոեզիայի որոշ կողմերի ավելի լայն ստեղծագործական յու-րացման համար։ Այդ առումով, բացի Թումանյանից և Իսահակյանից, հատուկ հետաքրքրո-թյուն են ներկայացնում նաև դարասկզբի արեւելահայ մյուս մեծ բանաստեղծի՝ Վահան Տերյանի ստեղծագործական կապերը Լերմոնտովի պոեզիայի հետ։ Բայց այս հարցի քննությունը դժվարանում է այն պատճա-ռով, որ տվյալ դեպքում հետազոտողը չի կարող հենվել գրական առնչություն-ների ուսումնասիրության ժամանակ սովորաբար ամենից զորեղ համարվող որոշակի տիպի փաստերի վրա։ Վահան Տերյանը չունի ոչ մի ուղղակի ասույթ Լերմոնտովի մասին, նա չի հասցրել որևէ ընթացմանություն անել նրա ստեղ-ծագործությունից։ Այդ է պատճառը, որ «Տերյան և Լերմոնտով» թման մին-չև այժմ առանձին քննության նյութ չի դարձել։ Այդ մասին միայն համառոտ

տեղեկությունների կարելի է հանդիպել Տերյանին նվիրված գրականության մեջ¹։ Այնինչ այդ հարցն արժանի է ավելի հանդամանալից քննության, քանի որ էական նշանակություն ունի ինչպես Տերյանի գրական կենսագրության և բանաստեղծական սկզբունքների հետազոտության համար, այնպես էլ իբրև «Լերմոնտովը և հայ գրականությունը» թեմայի մի կարևոր օղակ։ Մանավանդ որ պահպանված փաստերը, այնուամենայնիվ, հիմք են տալիս ավելի հանգամանորեն արժարժեքի Լերմոնտովի նկատմամբ Տերյանի վերաբերմունքի և նրա պոեզիայի հետ ունեցած ստեղծադործական առնչությունների հարցը։ Քննենք այդ հարցի նախ մեկ, ապա մյուս կողմերը։

Ինչպես ցույց են տալիս կենսագրական փաստերը, Լերմոնտովը եղել է Տերյանի ամենասիրելի բանաստեղծներից մեկը՝ սկսած վաղ պատանեկության տարիներից, Լազարյան ճեմարանում ուսանելու շրջանից։ 1911 թ. իր մտերիմ ընկեր և բարեկամ Յուլակ Խանզադյանին գրած մի նամակում Վ. Տերյանը մի անձնական խոստովանություն է արել, որը կարևոր է մեր թեմայի համար։ Խնդրելով իր «ամենաճերմ բարևը» հաղորդել ընկերոջ կնոջը՝ Վարենկային, Տերյանը փակագծում ավելացնում է. «Այդ անունը միշտ հիշեցնում է Լերմոնտովին և նրա Варенька Лопухина-ին, որի վրա, Լերմոնտովի հետ, ես էլ եմ սիրահարված ևղել դեռ աշակերտ ժամանակվանիցս» (III, 246)²։ Վարվառա Լոպուխինայի նկատմամբ տածած ռոմանտիկ սերն ու հափշտակությունը, որոնք ուղեկցել են Լերմոնտովին պատանեկան տարիներից մինչև մահ, Վահան Տերյանը, մեծ բանաստեղծի երգերի ազդեցության տակ, վերապրել է իբրև սեփական հոգու երազանք ու սեր։

Որ պատանի Տերյանը մի առանձին սիրով ու հետաքրքրությամբ է վերաբերվել Լերմոնտովին, մենք ունենք նաև ուրիշ վկայություններ։ Բանաստեղծի աշակերտական տետրերից մեկում, որը նվիրված է ռուսական պոեզիայի՝ եռվանկ (ամֆիբրաքոս և անապեստ) և երկվանկ (քորեյ և յամբ) ոտքերով գրված բանաստեղծություններին, Լերմոնտովից բերված օրինակները քանակով ամենից մեծ տեղն են գրավում։ Համապատասխան հատվածներ են բերված Լերմոնտովի «Տերևը», «Եվ տխուր է, և ձանձրալի», «Հրեշտակ», «Եղևնի», «Մ. Ա. Շչերբատովային», «Աղոթք», «Ո՛չ, ես Բայրոն չեմ...» և «Ինչի՞ց է» բանաստեղծություններից, ինչպես նաև մեկական քառատող «Դե» և «Մծի-րի» պոեմներից³։

Հատկանշական է նաև այսպիսի մի փաստ։ Ռուսերեն լեզվով գրած մի շարք նամակներում Տերյանն օգտագործում է առանձին տողեր և արտահայտություններ Լերմոնտովի պոեզիայից, դրանք բնականորեն ձուլվելով իր խոս-

¹ Տե՛ս Վ. Պարտիզոնու ծանոթագրությունները Վ. Տերյանի երկերի ժողովածուի 3-րդ հատորում (Հայպետհրատ, Երևան, 1963, էջ 551—553)։ К. Григорьян, Ваан Терьян, М., 1957, էջ 122, 140. Լերմոնտովի և հայ գրականության կապերին նվիրված հատուկ ուսումնասիրության մեջ (Մ. Դանիելյան, Լերմոնտովը և հայ մշակույթը, Երևան, 1960), վահան Տերյանն առհասարակ չի հիշատակվում։

² Վահան Տերյան, Երկերի ժողովածու երեք հատորով։ Կազմեց և ծանոթագրեց Վ. Պարտիզոնի, Հայպետհրատ, Երևան, 1960—1963։ Այս հրատարակությունից կատարվող մեջբերումները ցույց են տրվում տերստում, նշելով համապատասխան հատորն ու էջը։

³ Տե՛ս Ի. Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարան, Վահան Տերյանի ֆոնդ, № 124։

քին, դարձնելով սեփական մտքի և հույզի արտահայտություն: Հետաքրքիր է, որ ընդամին ոչ մի անգամ աղբյուրը, այսինքն՝ Լեւոնտովի անունը չի հիշատակվում: Նամակի հեղինակը և հասցեատերը այնքան լավ գիտեն սիրելի բանաստեղծին, որ առանց հատուկ նշման էլ կհասկանան, թե ում են պատկանում շակերտների մեջ վերցրած բառերը: Ամեն ինչից երևում է նաև, որ Տերյանը բոլոր դեպքերում Լեւոնտովին վկայակոչում է հիշողությամբ, առանց տպագիր տեքստին դիմելու: Ահա այդ օրինակները:

1907 թ. հունվարին, քաղաքական համոզմունքների համար բանտ նետված իր ընկերոջը՝ Օնիկ Օհանջանյանին գրած նամակում, մի տխուր-հեզնական հարց տալով նրան. «Արդյոք դու հաճախ ես երազում սիրեցյալիդ մասին», Տերյանն անմիջապես երեք տող է հիշում Լեւոնտովի «Կալանավորը» բանաստեղծությունից, նրանց օգնությամբ արտահայտելով երազանքի և դաժան իրականության անհամատեղելիության միտքը.

Но окно тюрьмы высоко,
Черноокая далеко
В пышном тереме своем!⁴

Այս տողերն, անշուշտ, նամակում բերված են հիշողությամբ, և դրանով թերևս պետք է բացատրել տան երկրորդ տողի («Дверь тяжелая с замком») բացթողումը:

Մի քանի ամիս անց, դեռևս բանտում գտնվող նույն ընկերոջը հասցեագրած մի այլ նամակում, ակնարկելով սկսված քաղաքական ռեակցիայի ծանր պայմանները, բանաստեղծն իր հարցը ձևակերպում էր «Մծիրի» պոեմի 6-րդ գլխի բառերով. «Ты хочешь знать, что видел я на воле?» և անմիջապես այդ հարցին պատասխանում էր այսպես. «Ոչինչ, բացի քաղցից և ստորությունից: Այստեղից բարոյախոսություն. «պետության տված հացը կեր, եղբայր, և երբեք մի ցանկա այդպիսի ազատություն: Բայց դու, իհարկե, կասես. «ոչ, ավելի լավ է ազատության մեջ քաղցած լինել, քան բանտում՝ երջանիկ»: Ես քեզ հետ լիովին համաձայն եմ»⁵: Այսպես, Լեւոնտովի և նրա ազատասեր հերոսի տրամադրությունները դառնում են ռուսական առաջին հեղափոխության շրջանում ապրող և գործող դեմոկրատական երիտասարդության ազատաբաղձ խոհերի թարգմանը:

Լեւոնտովյան արտահայտության յուրօրինակ ռեմինիսցենցիայի հանդիպում ենք նաև 1914 թ. մարտին Անթառամ Միսկարյանին գրած նամակում: Այդ ժամանակ բանաստեղծի նամակագրությունը Ա. Միսկարյանի հետ շարունակվում էր արդեն մի քանի տարի, նրան նա հաճախ էր բացել իր հոգունվիրական գաղտնիքները: Եվ ահա, աշխարհին անծանոթ ու անհասկանալի այդ հոգեկան կապի մասին խորհելիս Տերյանը մտաբերում է Լեւոնտովի «Դաշնագիր» բանաստեղծության տողերը. «Пускай толпа клеймит позором

⁴ Նույն տեղում, № 254: Այս և հաջորդ նամակներից երկուսի ռուսերեն բնագրերը մինչև այժմ չեն հրապարակվել («Նրկերի ժողովածուի» 3-րդ հատորում տպագրվել է նրանց հայերեն թարգմանությունը):

⁵ Նույն տեղում, № 255:

наш неразгаданный союз»: Բանաստեղծը գրում է. «Ժամանակ առ ժամանակ «մեր չհասկացված դաշինքը» (իսկ գուցե ձեր գլխից և մանավանդ սրտից նա վաղուց դուրս է թռել: Գուցե դա բնավ էլ չի՞ եղել) սկսում է ինձ ներշնչել ինչ-որ հատուկ զգացմունք, ձեռք է բերում ինչ-որ առանձնահատուկ իմաստ և նշանակություն, և այդ բոլորներին ես հատկապես ուզում եմ ձեզ մոտ լինել: Մի տեսակ անզուսպ, մինչև վերջ, մի տեսակ տարօրինակ ձևով, և եթե այս բառն այդքան գոեհացված չլիներ, ես կասեի՝ «խելահեղորեն» — հենց «խելահեղորեն»⁶:

Վերջապես, Վարյա Խանզադյանին հասցեագրած մի նամակում (գրված, հավանաբար, 1915 թ.) Տերյանն իր հոգեկան ծանր կացությունը հայտնելու համար դիմել է Լերմոնտովի՝ ասացվածք դարձած խոսքերին. «Некому ры-
ку подать»: Ահա նամակի այդ հատվածի թարգմանությունը. «Զբաղվում եմ շատ-շատ բաներով և քիչ չեմ պարապում, բայց ոչնչով բավարարված չեմ. դրա համար շատ պատճառներ կան, կյանքն էլ շատ խղճուկ է, աննշան, և գլխավորը՝ «չկա մեկը, որին ձեռք պարզես», ևս այստեղ շատ եմ միայնակ, և թախծալի է»⁷:

Լերմոնտովի ստեղծագործության նկատմամբ ունեցած հատուկ հետաքրքրությունն ապացույց է նաև նրա երկերի հայերեն ժողովածուն հրատարակելու ծրագիրը, որ մի քանի տարի զբաղեցրել է Վահան Տերյանին: Որպեսզի ըստ արժանվույն գնահատենք Տերյանի այդ մտահղացումը, անհրաժեշտ է հիշեցնել հետևյալը: Մինչև մեր դարի 10-ական թթ. հայերեն գրքերով հրատարակվել էին միայն Լերմոնտովի առանձին ստեղծագործություններ, ինչպես «Դեռ» (երեք տարբեր թարգմանությամբ), «Մծիրին», «Հաջի Աբրեկը», «Փախըստականը», «Մաքսիմ Մաքսիմիչը», «Աշուղ Ղարիբը», «Դիմակահանդեսը» (արձակ թարգմանությամբ): Լերմոնտովին խոշոր տեղ էր հատկացված Ալեքսանդր Մատուրյանի «Ռուս բանաստեղծներ» թարգմանական անթոլոգիայի առաջին հատորում (1905): Սակայն Լերմոնտովի երկերի հայերեն ժողովածու հրատարակելու միտքը առաջին անգամ ծագում է դարասկզբին և պատկանում է Վահան Տերյանին: Մտահղացման սկիզբը, ըստ երևույթին, վերաբերում է 1911 թ., երբ Տերյանը Պ. Մակինյանի հետ միասին Մոսկվայում կազմակերպեց «Պանթեոն» հրատարակչական ընկերությունը: Հրատարակչության ծրագրած առաջին գրքերից մեկը Լերմոնտովի երկերի երկհատոր ժողովածուն էր, որը նախատեսվում էր լույս ընծայել բանաստեղծի ծննդյան 100-ամյակի առթիվ՝ 1914 թ.: Թե ինչքան ուշալ էր համարվում այդ գործը, երևում է այն փաստից, որ 1912 թ. «Պանթեոնի» լույս ընծայած՝ Վահան Տերյանի «Բանաստեղծություններ» գրքի վերջին էջի վրա շուտով հրատարակելիք գրքերի թվում (Ա. Շնիցլերի, Գ. Հաուպտմանի և այլն) նշվում էր նաև. «Մ. Յու. Լերմոնտով: Երկերի ժողովածու. երկու հատոր. խմբագրությամբ Վահան Տերյանի: (Պատրաստվում է)»⁸:

1911 թ. վերջին հայկական թերթերում տպագրվեց «Պանթեոնի» խմբագրության նամակը (տե՛ս III, 552—553): Մանուցելով, որ Լերմոնտովի երկ-

⁶ Ваан Терян, Нензанные письма. Подготовка текста, предисловие и комментарии Нвард Терян, Ереван, 1970, էջ 178—179:

⁷ Դրականության և արվեստի թանգարան, Վահան Տերյանի ֆոնդ, № 251:

⁸ Վ ա հ ա ն Տ եր յ ա ն, Բանաստեղծություններ, հատ. I, Մոսկվա, 1912, էջ 212:

հատոր ժողովածուն «պարունակելու է բանաստեղծի չափական և արձակ գրվածքները», խմբագրությունը դիմում էր «բոլոր հայ հեղինակներին, որոնք երբևիցե թարգմանել են Լեւոնտոլից», խնդրելով ուղարկել իրենց թարգմանությունները ժողովածուի համար: Նույն խնդրանքով Տերյանը հատուկ նամակներ է գրել նաև առանձին հայ գրողների ու գրականագետների (տե՛ս III, 246—249, 257, 274): Մասնավորապես, նախատեսվում էր, որ «Մեր ժամանակի հերոսը» թարգմանելու է Ցոլակ Խանզադյանը: Տերյանի՝ մեզ հասած նամակներում Լեւոնտոլի ժողովածուն վերջին անգամ հիշատակվում է 1913 թ. մայիսին:

Ոչ մի կասկած չի կարող լինել, որ իր խմբագրությամբ հրատարակելիք ժողովածուի համար Վ. Տերյանը ևս թարգմանություններ էր կատարելու, թեև որևէ կոնկրետ փաստ մեզ չի հասել: Առհասարակ, Լեւոնտոլի երկերի ժողովածուի հետ կապված շատ նյութեր, ըստ երևույթին, անհետ կորել են, կամ մինչև այժմ, Տերյանի արխիվի ուրիշ մասերի հետ միասին, պահվում են մասնավոր անձանց մոտ: Միայն դրանով կարելի է բացատրել այն տխուր փաստը, որ ժողովածուի համար Տերյանի հավաքած նյութերից այժմ մեր տրամադրության տակ ոչինչ չկա: Մի բան միայն կարելի է վստահորեն ասել, որ Լեւոնտոլի երկերի հայերեն ժողովածուի հրատարակությունը չիրագործվեց շուտով սկսված համաշխարհային պատերազմի պատճառով: Ներգրավվելով ժամանակի վիթխարի իրադարձությունների մեջ, Վահան Տերյանն իր կարճատև կյանքի հաջորդ տարիներին, բնականաբար, չկարողացավ շարունակել և ավարտել սկսած գործը:

Լեւոնտոլի հետ կապված մի հետաքրքիր փաստ էլ կա Տերյանի կենսագրության մեջ: 1914 թ. հունվարին, պատասխանելով Ծ. Խանզադյանի առաջարկին՝ «Բաքվի ձայն» թերթին աշխատակցելու մասին, Տերյանը գրում էր. «Այժմ հոգված չեմ դրի, բայց ուզածդ հոգվածը Լեւոնտոլի մասին մեծ ուրախությամբ կգրեի, եթե ամառս ազատ լինեմ»: Խոսքը այդ տարվա աշնանը (հոկտեմբերին) լրացող Լեւոնտոլի ծննդյան 100-ամյակի առթիվ հոգված գրելու մասին էր: Նամակի շարունակության մեջ Տերյանն ավելացնում էր. «Համենայն դեպս, եթե որևէ հնարավորություն լինի, կաշխատեմ ցանկությունդ կատարել, եթե ոչ այժմ, գոնե ամառը (հոբելյանը դեռ հեռու է—չէ՞ որ ես դեռ դիրք էլ պիտի հրատարակեմ— այդ բոլորը ամառն եմ անելու!!)» (III, 325): Վերջին բառերով Տերյանը թերևս ականարկում է Լեւոնտոլի երկերի ժողովածուն: Հոգված գրելու մտադրությունը ևս չիրագործվեց: Նախ, «Բաքվի ձայն» թերթը շուտով, Լեւոնտոլի հոբելյանից մի քանի ամիս առաջ, արդեն փակվեց: Իսկ ամռանը սկսված պատերազմը ստիպեց առհասարակ հրաժարվել մեծ բանաստեղծի 100-ամյակի լայն տոնակատարությունից:

Սակայն ըստ երևույթին հենց այս շրջանին են պատկանում և Լեւոնտոլի երկերի ժողովածուն նախապատրաստելու կամ նրա մասին հոգված գրելու հետ են կապված այն բավական ընդարձակ ուսերեն գրառումները, որոնք պահվում են Տերյանի արխիվում: Մինչև այժմ դրանք չեն գրավել հետազոտողների ուշադրությունը: Թանաքով, Տերյանին հատուկ գեղեցիկ ու հստակ ձեռագրով գրված 18 մեծադիր էջեր են դրանք՝ ПЕРМОНОТОВ ընդհանուր վերնագրի տակ⁹: Առաջին էջը զբաղեցնում է այն գիտական-քննադատական գրա-

⁹ Տե՛ս Գրականության և արվեստի թանգարան, Վահան Տերյանի ֆոնդ, № 135:

կանոթյան ցանկը, որն, ըստ երևույթին, Տերյանը մտադիր է հղել կարգալ և մշակել իր աշխատանքի առնչությամբ: Ցուցակն ամփոփում է ինչպես Հերմոնտովի մասին մենագրական աշխատություններ ու հոդվածներ, այնպես էլ ռուս գրականության պատմության ընդհանուր ակնարկներ: 29 անվանումներից 13-ի առջև Տերյանը մատիտով վերբրիկ գծիկ է դրել, երևի նշելով արդեն կարգացած կամ ծանոթ աշխատությունները: Նկատի ունենալով այս փաստաթղթի կարևորությունը հայ բանաստեղծի լերմոնտովագիտական հետաքրքրությունների շրջանակը պատկերացնելու համար, ստորև բերում ենք այդ ցուցակը նույնությամբ:

1. Н. Котляревский, М. Ю. Лермонтов. 2. П. Висковатов, М. Ю. Лермонтов, жизнь и творчество. 3. Вл. Соловьев о Лермонтове, «Вестник Европы», 1901, № 2. 4. Овсяннико-Куликовский, История русской интеллигенции, Сочинения. 5. Белинский, Сочинения, т. 6 и 8 (в изд. Венгеров). 6. Ап. Григорьев, Сочинения. 7. Мережковский, Лермонтов — поэт сверхчеловечества. 8. Пыпин, История русской литературы. 9. Полевой, История русской литературы. 10. Михайловский, Сочинения, т. V. 11. Михайловский, Литература и жизнь. 12. Спасович, Сочинения, т. VIII (по поводу книги Котляревского). 13. Андреевич-Соловьев, Очерки по истории русской литературы XIX в. 14. Скабичевский, История новейшей русской литературы. 15. Герасимов, Очерк внутренней жизни Лермонтова («Вопросы философии и психологии», 1891, № 3). 16. Введенский, Критические очерки. 17. Андреевский, Литературные очерки. 18. Головин, Русский роман и русское общество. 19. Водовозов, Новая русская литература. 20. Евстафьев, Новая литература. 21. Порфирьев, История русской литературы. 22. Садовник, Очерки по истории русской литературы. 23. Егуже, Чувство природы в поэзии Пушкина, Лермонтова и Тютчева. 24. Кропоткин, Идеалы и действительность в русской литературе. 25. Айхенвальд, Силуэты. 26. Волынский, Книга великого гнева. 27. Ив. Иванов, Новая культурная сила. 28. Иванов-Разумник, История русской общественной мысли. 29. Спасович о Лермонтове («Вестник Европы», 1888 г., № 3, 4).

Վ. Տերյանի գրառումների մնացած 17 էջերը քաղվածքներ են այս ցուցակի 3-րդ և 12-րդ անվանումներից՝ Վլադիմիր Սոլովյովի երկերի 8-րդ հատորից (10 էջ քաղվածք) և Վ. Դ. Սպասովիչի երկերի 8-րդ հատորից (7 էջ քաղվածք): Իհարկե, այդ քաղվածքների հիման վրա դժվար է պարզել Հերմոնտովի մասին Տերյանի ապագա հոդվածի գրույթները կամ ուղղությունը: Թերևս նա գրառումներ է կատարել նաև մյուս գրքերից, բայց դրանք մեզ չեն հասել: Անվիճելի է միայն այն բացառիկ պատասխանատու վերաբերմունքը, որ Տերյանը հանդես է բերել Հերմոնտովի մասին որևէ բան գրելուց առաջ:

Հիշյալ գրառումներից հատկապես կարևոր է ռուս հայտնի իդեալիստ փիլիսոփա և քննադատ Վլ. Սոլովյովի «Հերմոնտով» հոդված-դասախոսությունը (1899) գիմելը: Մենք չենք կարող կուսհել, թե այդ քաղվածքներից հատկապես ինչ էր վերցնելու Տերյանը իր հոդվածի համար: Հնարավոր է նաև, որ Տերյանը ցանկացել է վիճարկել Հերմոնտովին տրված որոշ գնահատականներ, որ Վլադիմիր Սոլովյովը շարադրել է իր «նոր քրիստոնեական ուսմունքի» դիրքերից, որոնք, իհարկե, բոլորովին խորթ էին հայ բանաստեղծին: Հերմոնտովի մասին Վլ. Սոլովյովի դատողությունների միակողմանիությունը այդ ժամանակ արդեն պարզ էր շատերի համար¹⁰: Սակայն ինչ կուսհումներ էլ որ

¹⁰ Տե՛ս, օրինակ, 1911 թ. Ա. Բլոկի գրած հոդվածը («Рыцарь-монах») Վլ. Սոլովյովի մասին (А. Блок. Собрание сочинений, т. 5, М.—Л., 1962, էջ 449):

արվեն, Վլ. Սոլովյովի հոգվածի նկատմամբ ցուցաբերած սեեռուն ուշադրությունը ինքնին հատկանշական է: Այդ երևույթը պետք է դիտել այն ընդհանուր հետաքրքրություն Ֆոնի վրա, որ դարասկզբի ռուս բանաստեղծական երիտասարդությունը, հատկապես այսպես կոչված «կրտսեր սիմվոլիստները» (Ա. Իլյով, Վ. Իվանով, Ա. Բելի և ուրիշներ) տածում էին դեպի Վլ. Սոլովյովի փիլիսոփայությունը, քննադատությունը և պոեզիան: Այդ միջավայրում դաստիարակված, զգալի չափով սիմվոլիզմի պեղագիտության միջով անցած հայ բանաստեղծը չէր կարող ինչ-որ չափով չբաժանել այդ ընդհանուր հետաքրքրությունը:

2

Անցնենք «Տերյան և Լերմոնտով» թևածալի երկրորդ կողմին՝ ստեղծագործական ընդհանրությունների և շփումների հարցին: Մենք իրավունք ունենք այս հարցն առաջադրելու թեկուզ այն պարզ տրամաբանությամբ, որ մի բանաստեղծի սերն ու բուռն հետաքրքրությունը նախորդ շրջանի բանաստեղծի նկատմամբ չի կարող չարտացոլվել նրա կյանքի զլխավոր գործի մեջ՝ նրա պոեզիայում: Բայց սա նաև սայթաքուն ճանապարհ է, որը քիչ թյուրիմացությունների և արհեստական զուգահեռների չի հանգեցրել դրական առնչությունների ուսումնասիրության ժամանակ: Թեմաների և մոտիվների, մտքերի և պատկերների նմանությունները, որոնք հաճախ ներկայացվում են իբրև ազդեցության կամ փոխառության արդյունք, ըստ էության հետևանք են հասարակական հանգամանքների, աշխարհզգացողության և բանաստեղծական մտածողության ընդհանրությունների, որոնք օբյեկտիվորեն առկա են տարբեր արվեստագետների միջև: Մասնավորապես, դժվար չէ այդպիսի զուգահեռներ անցկացնել Լերմոնտովի նման համապարփակ և բազմակողմանի մի բանաստեղծի հետ, որովհետև, ինչպես գրում էր Բելինսկին, նրա ստեղծագործության մեջ «թաքնված են պոեզիայի բոլոր տարբերները», նրա մեջ մենք տեսնում ենք «այն բոլոր ուժերը, այն բոլոր տարրերը, որոնցից կազմվում են կյանքն ու պոեզիան»¹¹:

Վահան Տերյանը՝ Լերմոնտովից յոթ-ութ տասնամյակ հետո ստեղծագործած, այն էլ ուրիշ ազդային գրականության պատկանող բանաստեղծը, բնականաբար, չէր կարող որևէ մոտիվի կամ տրամադրության մարմնավորման մեջ լիովին համընկնել Լերմոնտովի հետ: Հետևաբար, ուղղակի զուգահեռներն այստեղ հազիվ թե ճիշտ լինեն: Բացի այդ, իբրև բանաստեղծական անհատականություն, մի շարք նմանությունների հետ միասին, Տերյանը նաև շատ կողմերով էապես տարբերվում է Լերմոնտովից, և դա պայմանավորված է ինչպես դարաշրջանի, հասարակական խնդիրների, այնպես էլ զեղարվեստական մտածողության փոփոխություններով: Վ. Տերյանի բանաստեղծական սկզբունքները ունեն շփման մի շարք կետեր ռոմանտիկական պոեզիայի, այդ թվում և Լերմոնտովի հետ, բայց դա ընդհանուր առմամբ նոր որակի ռոմանտիզմ է՝ «նեոռոմանտիզմ» կամ «սիմվոլիստական ռոմանտիզմ»: Տերյանի ստեղծագործության համար, ընդհանրապես, քնորոշ չեն դասական ռոման-

¹¹ В. Г. Белинский, Собрание сочинений в трех томах, т. I, М., 1948, էջ 653, 694:

տիզմի բուռն կրքերը, կոսմիկական ընդգրկումները, կերպարների տիտանականությունը, դեմոնիզմը և այլն: Հայ բանաստեղծական խոսքը նա զարգացրեց առավելապես զգացմունքների և խոհերի նրբության, հղկվածության, պատկերի փոխաբերական, ենթատեքստային իմաստի խորացման ուղիով: Մյուս կողմից, XX դարի սկզբի հասարակական իրադրությունը նրա պոեզիայի մեջ մտցրեց այնպիսի գծեր, որոնք անհնար էին Լերմոնտովի կամ XIX դարի առաջին կեսի ռոմանտիկական շարժման ուրիշ ներկայացուցիչների մոտ: Պայքարի մոտիվները, որոնք տարբեր չափերով բնորոշ են եղել Տերյանի ստեղծագործական ամբողջ ուղու համար՝ առաջին ռուսական հեղափոխության շրջանից մինչև Հոկտեմբերի առաջին տարիները, ի վերջո միաձուլվեցին պրոլետարական հեղափոխության գաղափարների հետ: Սկզբից ևեթ այդ մոտիվները շատ ավելի որոշակի քաղաքական բովանդակություն ունեին, քան դա հնարավոր էր ազնվական հեղափոխականության առաջավոր գաղափարներով դաստիարակված Լերմոնտովի ստեղծագործության մեջ:

Այս և ուրիշ տարբերությունները միանգամայն բնական են ու հասկանալի: Բայց դա չպետք է խանգարի տեսնելու Տերյանի ստեղծագործական նկարագրի այն կողմերը, որոնք մոտիկից հիշեցնում են Լերմոնտովի պոեզիան և, հնարավոր է, ձևավորվել են ոչ առանց վերջինիս որոշակի ներգործության: Օրինակ, չի կարելի չնկատել Տերյանի համար այնքան բնորոշ թախծի, մենակության, անհատի ողբերգական կեցության մոտիվների «ազգակցական կապը» ներքին այրման, ծանր մտորումների, հիասթափության և ակտիվ պեսիմիզմի լերմոնտովյան պոեզիայի հետ: Սակայն այս կարգի կոնկրետ զուգահեռների հայտնաբերումը հազիվ թե արդյունավետ կլինի, քանի որ նրանց հիմնական աղբյուրը թաքնված է ամեն մի բանաստեղծի անհատականության և դարաշրջանի մեջ: Վերցնենք միայն Տերյանի պոեզիայի այն գծերը, որոնք Լերմոնտովի հետ կապելու համար ավելի կայուն կովաններ են տալիս:

Վերը մենք արդեն բերել ենք Տերյանի 1911 թ. նամակի այն խոստովանությունը, թե ինքն էլ, Լերմոնտովի հետ միասին, դեռ աշակերտական նստարանից սիրահարված է եղել Վարենկա Լուպուխինային: Կա՞ն արդյոք այդ «սիրո» արձագանքները Տերյանի սեփական պոեզիայում:

Ինչպես հայտնի է, Վ. Լուպուխինայի կերպարը Լերմոնտովի համար հիմք է ծառայել կերտելու սիրային քնարերգության մի շատ ինքնատիպ շարք, կանացի բանաստեղծական մի իդեալ, որը էապես տարբերվում է սիրային մոտիվների մյուս լերմոնտովյան շարքերից (օրինակ՝ Ե. Ա. Սուշկովային կամ Ն. Ֆ. Իվանովային նվիրված բանաստեղծություններից): Այդ իդեալի բնորոշ գծերն են՝ կանացի հեզություն և մեղմություն, ամոթխած սեր, համեստ, չլիացնող արտաքինի տակ թաքնված ներքին հոգեկան հմայք և գեղեցկություն, զգայական կրքից բարձր կանգնած շարժումների զրացիա: Ահա Վարվառա Լուպուխինային նվիրված բանաստեղծություններից մեկը (1832)。

Она не гордой красотою
Прельщает юношей живых,
Она не водит за собою
Толпу вздыхателей немых.
И стан ее — не стан богини,

И грудь волною не встает,
И в ней никто своей святыни,
Припав к земле, не признает.
Однако все ее движенья,
Улыбки, речи и черты
Так полны жизни, вдохновенья,
Так полны чудной простоты,
Но голос душу проникает,
Как воспоминанье лучших дней,
И сердце любит и страдает,
Почти стыдясь любви своей.

Վահան Տերյանի սիրային լիրիկայի հերոսուհին և նրա հարուցած զգացմունքները կապված են ուրիշ հասարակական իրադրության և հոգեբանության հետ: Դա ժամանակակից մեծ քաղաքի վիթխարի զանգվածներում մոլորված, իր սիրո առարկային, որպես փրկության մի խարսխի, ձգտող անհատի զգացմունքներն են՝ տագնալի, անհանգիստ, հյուսված մեծ մասամբ տառապանքի նոտաներից: Այլ է նաև պատկերավորության համակարգը. կինը Տերյանի պոեզիայում հաճախ կորցնում է իրական գծերը, վերածվում է անմարմին անրջանքի, դառնում է երազի մեջ այցելող գեղեցիկ տեսիլ: Եվ, այնուամենայնիվ, եթե մի կողմ թողնենք բանաստեղծական մտածողության այս առանձնահատկությունները, որոնք զգալի չափով պայմանավորված էին սիմվոլիզմի գեղադրության ազդեցությամբ, դժվար չէ նկատել, որ կնոջ տերյանական իդեալը ինչ-որ «լուպուխինյան» կնիք է կրում իր վրա: Հիշենք, որ շատ բանաստեղծություններում Տերյանի քնարական հերոսն իր սիրած կնոջը «քույր» է անվանում. նա քրոջ պես հոգատար է, «անշար, մաքուր ու գթոտ», մոր նման «բարի, քնքուշ, նրբազգաց»: Նրա հիմնական գիծը գթությունն է, մեղմությունը, հոգեկան սփոփանքը, որով նա բուժում է քնարական հերոսի՝ կյանքում ստացած ծանր վերքերը: Վկայակոչենք միայն երկու բանաստեղծություն, որոնք, թվում է, կարող են բացատրել, թե Տերյանն ինչու էր «սիրահարվել» Հերմոնտովի հերոսուհուն: Առաջինը «Մթնշաղի անուրջներ» շարքի «Ցնորք» բանաստեղծությունն է, որը մի դիմում է արդեն մահացած ընկերուհուն.

Նա ուներ խորունկ երկնագույն աչքեր,
Քնքուշ ու տրտում, որպես իրիկուն.
Նա մի անծանոթ երկրի աղջիկ էր,
Որ աղոթքի պես ապրեց իմ հոգում:

Նրա ժպիտը մեղմ էր ու դողող,
Որպես լուսնյակի ժպիտը տխուր.
Նա չունեւ խոցող բովանակր կնոջ—
Նա մատենում էր որպես փղոս փուր...

Իմ հուշերի մեջ ամենից պայծառ,
Իմ լիված սրտի մաքուր հանգրվան,
Քույր իմ, դու չըկաս, փուր իմ, դու մեռար,
Ու քեզ հետ հոգուս լույսերը մեռան...

Եթե այստեղ հերոսուհու կերպարը շրջապատված է հուշերի և սուբյեկտիվ-հոգեբանական համեմատությունների մի բավական թանձր շերտով, ապա մի քանի տարի անց գրված և «Ոսկի հերթաթ» շարքում տեղ գտած մի այլ բանաստեղծության մեջ կանացի իդեալն ավելի ամբողջական և կոնկրետ արտահայտություն է ստացել։ Այստեղ արդեն բանաստեղծը դիմում է կենդանի, ապրող կնոջը.

Սիրում եմ աչքերիդ տխուրքունը խորին,
Անաղմուկ խոսքերիդ դաշնակները հիվանդ,
Կուսական ամոքխած փայփայանքդ, որ իմ
Սև օրերն է օրում խնդարյամբ հնազանդ:

Խոսքերդ կարկաշող որպես նուրբ մի գգեստ,
Ստվերում եմ սրտիդ գաղտնիքները սիրուն,—
Քո հոգին չի սիրում մեղկություն անհամեստ,—
Դու այնպես ես սիրում, կարծես քե չես սիրում:

Հեռավոր երկրի պես հմայող է հոգիդ,
Անուշ եմ խոսքերդ, ժրպիտներիդ աղջկա,—
Մանկական անպանծուն երգի պես միամիտ,
Դյուրական, որպես այն, որ չրկա, որ չրկա...

«Նա շուներ խոցող թովչանքը կնոջ», «Կուսական ամոթխած փայփայանք», «Քո հոգին չի սիրում մեղկություն անհամեստ», «Դու այնպես ես սիրում, կարծես թե չես սիրում»,— այս և նման բնութագրումները ներկայացնում են հենց այն գծերը, որոնցով Տերյանի սյատկերած կինը (ինչպես նաև Լերմոնտովի հերոսուհին) բարձրանում է սիրո սովորական ըմբռնումից, մարմնական կրքի աստիճանից և դառնում է հոգեկան բարձր կապ հաստատող մի էակ։ Լերմոնտովի պոեզիայի հետ ունեցած ստեղծագործական կապերի մասին են խոսում նաև Տերյանի բանաստեղծական երկու շարքերի բնաբանները։ «Ոսկի հերթաթ» շարքի ձեռագիրն ուներ Լերմոնտովից վերցրած հետևյալ բնաբանը.

В уме своем я создал мир иной
И образов иных существованье...

Լերմոնտովի ստեղծագործության ամենավաղ շրջանին (1829) պատկանող «Խուսական մեղեդի» բանաստեղծության այս տողերը իրոք արտահայտում էին Տերյանի այդ շարքի և նրա ողջ պոեզիայի ամենաբնորոշ գծերից մեկը՝ մտքի և բանաստեղծական երևակայության ուժով անհրապույժ շրջապատից բարձրանալու և մի «ուրիշ աշխարհ»՝ մի իսկական ղեղագիտական իրականություն ստեղծելու ողմանտիկական ձգտումը։ Ավելի նշանակալից է, անշուշտ, «Երկիր Նաիրի» հայրենասիրական շարքի բնաբանը, որը Լերմոնտովի «Հայրենիք» բանաստեղծության առաջին տողն է. Люблю отчизну я, по странною любовью! Կարևոր է ասել, որ Լերմոնտովի այս խոսքերը որոշ իմաստով խտացնում են «Երկիր Նաիրի» շարքի բովանդակության ամենակարևոր կողմերից մեկը, նրանք բանալի կարող են

ծառայել հայրենասիրության տերյանական ըմբռնումը բացահայտելու համար:

Հայ ժողովրդի պատմության ամենածանր շրջանում՝ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին գրված այդ շարքի գործերը ծնվեցին հայրենիքի ներկայի և ապագայի մասին բանաստեղծի ծանր խորհրդածություններից: Արտաքին-թեմատիկ առումով «Երկիր Նաիրին» կարծես թե որևէ նորություն չէր բերում. դա հայրենիքի ավանդական երգն է, որը, ինչպես գրել է Վահան Տերյանը «Հայ գրականության գալիք օրը» զեկուցման մեջ (1914), «կարմիր թելի նման անցնում է մեր գրականության միջով սկզբից մինչև մեր օրերը, դարձել է մի անբաժանելի հատկանիշ, գունավորել է մեր ինտելիգենցիայի միտքն ու երևակայությունը դարեր շարունակ...» (II, 251): Սակայն, ինչպես ավանդական թեմայի գեղարվեստական մարմնավորման, բանաստեղծական ձևերի ու միջոցների, այնպես էլ բուն հայրենիքի գաղափարի մեկնաբանման իմաստով «Երկիր Նաիրին» շատ կողմերով նոր խոսք էր հայ գրականության մեջ: Տերյանի ըմբռնումները իրենց ներքին էությունամբ դուրս էին գալիս հայրենասիրության գաղափարների սովորական շրջանակից՝ հայրենիքի անցյալի հերոսական էջերի դրվատում, թախծալից մտորումներ ողբերգական ներկայի մասին, վերածնության լավատեսական հավատ և այլն: Տերյանի բանաստեղծությունների մեջ այս տարրերն ինչ-որ չափով առկա են, բայց նա դրանք ընկալել ու վերապրել է նորովի, սովորական պատկերացումներից շեղվող մեկնաբանությամբ:

Իր ըմբռնումները հայրենասիրության մասին Տերյանն առավել որոշակիությամբ ձևակերպեց 1914 թ. գրած «Հոգևոր Հայաստան» հոդվածում: Իսկական սերը ժողովրդի նկատմամբ, խորհում էր բանաստեղծը, հայրենասիրության գործոն ուժը պետք է չափվի ոչ թե նվիրական անունների և փաստերի հղումով, ոչ թե պարծենկոտ կամ լալագին տրամադրություններով և ազգային մարտաշունչ կոչերով, այլ հայրենիքի տխուր իրականությունը, ժողովրդի ողին և բնավորությունը խորապես ձանաչելու և սիրելու, նրա փրկության դործին իրապես նպաստելու պատրաստակամությամբ: Հակադրվելով հայ բուրժուազիայի և նրա ազգայնական կուսակցությունների հավատամքին, որոնք հայրենասիրության վսեմ գաղափարը իջեցնում էին մինչև «հայ համազգեստը հագին հայ ոստիկանի» մասին երազելու կամ «շենքերի հայրենասիրության» աստիճանը (II, 316), բանաստեղծն իբրև ազգային վերածնության կարևորագույն պայմաններից մեկը առաջ էր քաշում ժողովրդի լեզուն և կուլտուրան ձանաչելու, հարգելու և հարստացնելու պահանջը: Տերյանին սկզբունքորեն խորթ էր «զոլոգիական ազգասիրության» կամ հայրենիքի նրկատմամբ կույր սիրո ամեն մի դրսևորում: Եվ թե ինչքան ազնիվ ու հետևողական էր բանաստեղծն իր համոզմունքների մեջ, երևում է այն փաստից, որ նամակներում նա չի վարանել անհամաձայնություն հայտնելու նույնիսկ իր ամենասիրելի բանաստեղծների՝ Իսահակյանի կամ Թումանյանի հետ, երբ նրանց այս կամ այն ստեղծագործության մեջ նկատել է հայրենասիրության գաղափարի, իր կարծիքով, ոչ-ճիշտ արծարծումներ (տե՛ս III, 184, 406):

Կարելի է ասել, որ իր ստեղծագործական կյանքի հենց սկզբից Տերյանը հոգևոր կոնֆլիկտի մեջ էր, իր խոսքերով ասած, «լիբերալ-ազգասեր-բուրժուա-ինտելիգենցիայի հայրենասիրության» հետ (II, 316), և այդ կոնֆլիկտը, ժամանակի ընթացքում ավելի ու ավելի խորանալով, նրան ի վերջո հանգեցրեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարներին:

Հայրենասիրության գավառական, նեղ-ազգային ըմբռնումների համեմատությամբ Տերյանն իր սերը չէր կարող շհամարել օտարոտի, անսովոր: Այդ նկատի ուներ բանաստեղծը, երբ 1914 թ. գրած մի նամակում, ակնարկելով «Երկիր նաիրի» շարքի առաջիկա հրատարակությունը, ավելացնում էր. «Գիտեմ, շատերին դուր չէ գալու» (III, 361): Եվ, ահա, Տերյանի համար իր բանաստեղծական և քաղաքացիական դիրքորոշման ձևակերպման լավագույն միջոցը դարձավ Լեւոնտովի տողը. «Люблю отчизну я, но странною любовью!»:

Դարասկզբի հայ գրականության մեջ Տերյանը միակը չէր, որ ուշադրություն էր դարձնում հայրենիքի նկատմամբ «տարօրինակ սիրո» Լեւոնտովյան բանաստեղծական պատկերին: Նշանակալից է, որ Լեւոնտովի ծննդյան 100-ամյակի առթիվ գրած հոգովածում («Կովկասի մեծ որդեգիրը») Հ. Թումանյանը անհրաժեշտ համարեց հատուկ և բավական մանրամասն կանգ առնել մեծ բանաստեղծի այդ «տարօրինակ սիրո» բացատրության վրա: «Մի՞թե Լեւոնտովը իր հայրենիքը չէր սիրում»,— հարց էր տալիս Թումանյանը և պատասխանում.

«Սիրում էր, այո՛, բայց «տարօրինակ» սիրով, ոչ էն սիրով, ինչ սիրով որ սիրում էին մնացած շատերը: Եվ ինքն էր խոստովանում հրապարակով, թե՛ ոչ արյունով գնած փառքը, ոչ գոռոզ ինքնավստահությունով լիքը հանգիստը, ոչ խավար անցյալի նվիրական ավանդները—ուրախության ոչ մի զգացմունք չեն շարժում իր մեջ: Իսկ էն «տարօրինակ» սերը, որով սիրում էր, և որը չէր մկրտում ոչ մի անունով, սակայն շռայլորեն փռում էր իր երկերում ու երգերում, ոչ հասկացող կար, ոչ գնահատող: Կյանքի ասպարեզը բռնած էին կամ ոչնչությունները և կամ նրանք, որոնց մասին ասում է՝ «իրենց սրիկայի սիրտը ծածկած էին մունդիրով»: Հասկացող, գնահատող հասարակություն չկար, և «տարօրինակին» հաղարավոր աչքերով հետապնդում, հաղարավոր ձևերով մերժում, քշում էին իրենց շրջանից»¹²:

Իսկ ականավոր արձակագիր Ստեփան Զորյանը «Տերյանի մահը» հոգովածում (1920), որը գրված է ծանր լուրի անմիջական տպավորության տակ, բանաստեղծի հայրենասիրական քնարը գնահատում էր այսպես. «Տերյանը Հայաստանը սիրում էր, ինչպես ինքն է ասում Լեւոնտովից բերած խոսքերով՝ «օտարոտի սիրով»: Այո՛, նա Հայաստանը, նրա զավակների «թուփ դեմքերը», նրա «խեղճ ու մերկ խրճիթները» սիրում էր ոչ թե թթված ազգամուլի ճշուն սիրով, այլ ինչպես մի գորովալի զավակ իր վշտահար ու անարգված մորը, որի առաջ փրուն ճառեր չեն արտասանում, այլ սիրում են լուռ՝ սրտի կսկիծով, «օտարոտի սիրով»¹³:

Այս փաստերը հիմք են տալիս ասելու, որ հայ ժողովրդի պատմության շատ դժվարին տարիներին, հայրենասիրական գաղափարների բուրժուա-նացիոնալիստական շարաշահման պայմաններում Լեւոնտովի «Հայրենիք» բանաստեղծությունը, նրա մեջ արտահայտված դեմոկրատական հայրենասիրու-

¹² Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Փննադատություն և հրապարակախոսություն, Երևան, 1951, էջ 303:

¹³ Ստ. Զորյան, Երկերի ժողովածու, հատ. 10, Երևան, 1964, էջ 349:

թյունը հայ գրականության լավագույն ներկայացուցիչների համար հոգևոր հենարան էր, միիթարության աղբյուր։ Չէ՞ որ այդ, Դոբրոլյուբովի հայտնի բնորոշմամբ՝ «զարմանալի բանաստեղծությունը» արտահայտությունն էր այն բարձր ըմբռնման, որ «կեղծ ճանապարհից փրկությունը միայն ժողովրդի մեջ է»։ Դա մի բանաստեղծություն է, ուր Լերմոնտովը «վճռականորեն վեր է կանգնում հայրենասիրության բոլոր նախապաշարմունքներից և հայրենիքի սերը հասկանում ճշմարտացի, սրբություն և բանականորեն»¹⁴։

Հայրենասիրության տերյանական ըմբռնումը ուրիշ դարաշրջանի և ուրիշ ազգային միջավայրի արդյունք էր և, բնականաբար, ուներ ուրիշ սոցիալական բովանդակություն։ Սակայն հայրենիքի նկատմամբ «սրբազան և բանական» սիրո հասնելու ճանապարհը երկու բանաստեղծների մոտ շատ ընդհանուր բան ունի։ Դա վճռական հեռացումն է տիրապետող ըմբռնումներից և հայրենիքի գաղափարը հասարակ ժողովրդի դիրքերից, մարդասիրական հայացքների լույսի տակ դիտելու ձգտումը։

Թե հայ բանաստեղծին ինչքան հարազատ էր հայրենասիրության լերմոնտովյան ըմբռնումը, ցույց է տալիս հատկապես «Երկիր Նաիրի» շարքի բանաստեղծություններից մեկը՝ «Դու հպարտ չես, իմ հայրենիք...»։ Համեմատելու համար նախ բերենք Լերմոնտովի բանաստեղծության առաջին մասը.

Սիրում եմ ես հայրենիքս, սակայն սիրով տարօրինակ:
Եվ անգոր է իմ այդ սիրույն միտքս մատնել լուրջ պարտության:
Ո՛չ այն փառքը, որ զնե է տա՛մ արշունով նա շարունակ,
Ո՛չ հանգիստը, որ լեցուն է ինձ նավաստան հպարտությամբ,
Ո՛չ էլ նրա նվիրական ավանդները մութ անցյալի
Իմ մեջ երբեք չեն հարուցում երազանքներ ուրախալի:
Բայց սիրո՛ւմ եմ, սիրո՛ւմ եմ ես — ինչի՞ համար՝ ե՛կ հասկացիր —
Նրա անափ ստեպների լոռքյունը ցրտից սառած.
Նրա քավուտ անտառների տարուբերումն անձայրածիր
Ու գետերի վարաբուր՝ ծովեր դառած:
Գլուղամիջյան ճանապարհով սիրում եմ ես քոչել կառքով
Եվ հաչացքով ներքափանցած՝ մրան փողը հետախուզել,
Փափագելով տա՛մ օրևան՝ տեսնել լույսեր տխուր շաբաթ.
Տրտմաթախիժ գլուղակների ղողղո՛ջ լույսեր:
(Թարգմ. Պարույր Սևակ)

Ահա և Վահան Տերյանի բանաստեղծությունը.

Դու հպարտ չես իմ հայրենիք.
Տրտում ես դու և իմաստուն.
Կիզում է քեզ մի հուր կնիք,
Մի հրմայող ու հին խոստում:
Եվ մի՞թե այդ վշտիդ համար
Ձեմ սիրում քեզ այսպես քնքուշ

¹⁴ Н. А. Добролюбов, Собрание сочинений в девяти томах, т. 2, М.—Л., 1962, էջ 263.

Եվ խոնարհվում մեզ պես համառ,
Ո՛ր, հայրենիք դառն ու անուշ...
Զրշլացա խնդուն փառքիդ
Անցյալ ու հին փայլով երբեք, —
Սիրեցի հեզ. անքն հոգիդ,
Եվ երգերդ մեղմ ու բեկբեկ,
Խեղճությունդ խավար ու լուռ,
Աղոթքներդ դառն ու ցավոտ,
Զանգակներիդ զարկը տրխուր,
Եվ խուզերիդ լույսերն աղոտ...

Այս բանաստեղծությունների մեջ կերտված է հայրենիքի երկու տարբեր պատկեր՝ Ռուսաստանի և Հայաստանի, և համապատասխանաբար տարբեր են նաև տրամադրության երանգները, հայրենի երկրի բնութագրման կոնկրետ մանրամասները։ Տերյանն իր բանաստեղծության մեջ, ինչպես և «Երկիր նաիրի» շարքի շատ ուրիշ մասերում, զծագրում է ճակատագրի կողմից հալածված, բազում տառապանքների միջով անցած ողբերգական Հայաստանի պատկերը՝ իր ազգային անկրկնելի հատկանիշներով։ Այդ իմաստով Լերմոնտովին կրկնելու մասին խոսք լինել չի կարող։ Սակայն, սխալված չենք լինի, եթե ասենք, որ Տերյանը, ըստ երևույթին, միանգամայն գիտակցաբար հետևել է պատկերի և տրամադրության զարգացման լերմոնտովյան սկզբունքին։ Բանաստեղծության վերջին երկու քառատողերում նա ևս նախ խոսում է այն մասին, թե ի՞նչը չի զրավում, չի շլացնում իրեն և ապա կատարում է իր «սիրո խոստովանությունը», բացատրում է, թե ո՞րն է իր նվիրական զգացմունքների առարկան։ Եվ հայ բանաստեղծն էլ հակվում է դեպի հայրենիքի ղեմկրատական ըմբռնումը, նրա երգն էլ դառնում է, Դոբրոլյուբովի նույն հոդվածի խոսքերով ասած, «դեպի ժողովուրդը մաքուր սիրո, նրա կյանքի նկատմամբ մարդասիրական հայացքի ամենալրիվ արտահայտություն»¹⁵։

Կարելի է ասել, որ Վ. Տերյանի՝ վերը բերված բանաստեղծությունը ծնվել է հայրենիքի ճակատագրի սեփական ըմբռնման և լերմոնտովյան դրական տրադիցիայի ընկան զուգորդման ճանապարհով։ Չենք խոսում արդեն բանաստեղծության եզրափակիչ պատկերի մասին («Զանգակներիդ զանգը տխուր, եվ խուզերիդ լույսերն աղոտ»), որն ուղղակի արձագանքում է Լերմոնտովի քնարական-էլեգիկ պատկերին. «Տրտմաթախիծ դուզականների դողդոջ լույսեր»։

Հնարավոր է, որ ավելի մանրամասն ուսումնասիրությամբ բացահայտվեն Լերմոնտովի պոեզիայի հետ Տերյանի ստեղծագործական առնչության նաև ուրիշ կողմեր։ Բայց ասվածն էլ բավական է համոզվելու համար, թե ինչքան կարևոր տեղ է զրավել Լերմոնտովը Վահան Տերյանի կյանքում և բանաստեղծական որոնումներում, և որ տվյալ դեպքում մենք գործ ունենք լերմոնտովյան պոեզիայի ստեղծագործական բեկման խոր և ուսանելի երևույթներից մեկի հետ։

¹⁵ Նույն տեղում, էջ 264։

ВААН ТЕРЯН И ПОЭЗИЯ ЛЕРМОНТОВА
(К 160-летию со дня рождения М. Ю. Лермонтова)

Доктор филологич. наук Э. М. ДЖРБАШЯН

(Р е з ю м е)

В статье раскрыто отношение крупного армянского поэта начала века Ваана Теряна (1885—1920) к творчеству М. Ю. Лермонтова. Интерес к великому русскому поэту, возникший еще в юношеские годы, привел В. Теряна к мысли об издании на армянском языке двухтомного собрания сочинений Лермонтова. Этот замысел не был осуществлен из-за начавшейся вскоре первой мировой войны. В статье публикуется составленный Теряном список критической литературы, использованной им, по-видимому, для написания статьи к 100-летию со дня рождения М. Ю. Лермонтова.

Во второй части статьи рассматриваются некоторые стороны творческого восприятия В. Теряном лермонтовской поэтической традиции. Особенно ощутимо это явление в патриотическом цикле «Страна Наири», эпиграфом к которому взяты слова Лермонтова: «Люблю отчизну я, но странною любовью!»